36. ՍԻՄՈՆ ԿՈՒՊԵՑԻՆ ՀԵՔԻԱԹԸ

Վախտի մեկին մի հարուստ թուջար մարդ է լինում, Սիմոն կուպեց անունով։ Էս մարդը շատ հարուստ է լինում, հինգ միլոն փարա է ունենում ու դռանն էլ հինգ բայրադ է տնկում։

Սիմոն կուպեցը իրեք միլոն փող թագավորի խազնեն է քցում, էրկու միլոնով էլ առուտուր է անում։ Սիմոն կուպեցու դռանն էլ ղատիմի էրկու ղավազ է ղարաղուլ քաշում։ Էս մարդը ունենում է մի հատ տղա, մի հատ էլ աղջիկ, էրկուսն էլ մեկ-մեկուց անլման սիրուն։ Բիրտան էդոր կնիկը մեռնում է, երեխեքը մնում են անմեր։

Սիմոն կուպեցն բերում իր տղի ու աղջկա համար մեկ լավ վարժապետ է բռնում, իր լավ օթախներից մեկը տալում է էդ վարժապետին օր իր երեխոնցը լավ հ՚ուսում տա, ու ինք ապրանքը դևեքուն բառնում, բազիրկան կապում ու հայտե Ստամբոլ, հ՚ուր ես էկա։ Տանում հոն իր ապրանքը ծախում է, ընտից էլ ապրանք բառնում բերում է իր քաղաք ու ուրիշ քաղաքներ ծախում։

Սիմոն կուպեցն Ստամբոլի մեջ իրան մեկ ախպրացու է ունենում Պետրոս անունով։ Էս մարդն էլ շատ հարուստ է էղնում։ Սիմոն կուպեցն ու էդ Պետրոսը իրար էնքան են հազ անում, կըսես թե մեկ արգանղից ծնած ախպեր էղնին։ Բան էն է, որ Պետրոսը ավլատ թավլատ չի ունենում։

Սիմոն կուպեցու տղեն ու աղջիկ լավ հ՚ուսում են առնում, իրար էլ էնպես են սիրում, որ մեկ սհաթ իրար օր չ՚տեսնեին կըսեին, թե

աշխարք ավերել է։ Հ՚ուր օր էրթում էին ման գալու, իրար թարկ չէին տալում։

Սիմոն կուպեցու վախտն էլ յավաշ-յավաշ անցնում էր, ըխտիարնում էր։

Անցնում է մի վախտ, տղեն էփեի խոշրնում է։ Սիմոն կուպեցն իր առուտուրին է էրթում։

Մեկ օր էլ հերը գալում է տուն հիվանդանում պառկում է ծանդր յաթխով։ Սիմոն կուպեցն տեսնում է, որ պտի մեռնի, կանչում է տղին ասում է.— Օրդի՛, իմ վախտը հասել է, ես մեռնում եմ, աշե իմ մեռնելուց հետև պարապ չը մնաս։ Թե որ թամրլութուն անես իմ հարստութուն քեզի էրկու տարի էլ չի օգտե, էն վախտ աղքատ կը մնաս։ Ինչրխ որ ես էի անում, դուն էլ էնենց կէնես։ Դավեքիդ կը բառնաս, բաղրկան կը կապես գես, կ՚էրթաս գես Ստամբոլ, էնտի մի լավ աղբեր ունիմ Պետրոս աղա անունով, էնոր քաղաքը կը ծախես գես, էնոր մաղաղից էլ ապրանք կը բառնաս, հոս կը բերես ծախես։ Պետրոս աղեն քեզի չի ճանչնում, դու կըսես թե. «Ես Սիմոն կուպեցու տղան եմ», էն քու մալդ կը ծախե, քու բեռներդ կը բեռնե, քեզի ճամբու կը դնե։

Էս օսիաթը անում է տղին ու մեռնում է։ Տղեն ու աղշիկ իրանց հորը պատվով, պատարագով, ամեն կարգով տանում թաղում են։ Աղքատներին բազում փարա ցրվում են, գալում են տուն. իրանցն էլ սգի օրերը անցնում է։

Մեկ օր ախպերը ասում է քուրոշը.— Քուր, իմ հերը մեռավ, ամա մեռնելու վախտ ընձի օսիաթ արավ, որ տունը պարապ չ՚ընստիմ։ Էստից ապրանք բառնամ տանիմ Ստամբոլ, մեր հոր մի ախպեր կա էնդի, էնոր մոտ ծախեմ, ընտից էլ ապրանք բառնամ, հոս բերեմ, ծախեմ։

Քուրը լալում ու ասում է.— Ախպեր, դու որ էրթաս հեռու երկըրներ բա ես ըստե առանց քեզի մո՞նց մնամ։ Ես առանց քեզի մի սհաթ էլ չեմ կարա կենա։

— Ես ի՞նչրխ անեմ քուր, դու իմ հետ չես կարա գալ, ես էլ որ չէրթամ մո՞նց կէդնի, չէ՞ որ մեր հոր օսիաթն է, որ չը կատարենք, պարտական ենք մնում։

Տղան աշում է, որ իլլաճ չկա, քուրը շատ է լալում, բերում իր պատկերը քաշել է տալում ու տալում է քուրոշ։ Քուրոշ պատկերն էլ առնում է իր մոտ։ Քուրոշն ասում է.— Առ, ես իմ պատկերը քու մոտ մնա, քուկդ էլ իմ մոտ, որ վախտ իրար կարոտցանք, հանենք սեյր անենք, մեր հավասները առնինք։ Էրթամ քաղքի մեշն էլ ման

գամ, աշեմ մի աստվածավախ պառավ կնիկ էլ չե՞մ կարա գտնի, որ փողով բերեմ քու մոտը մնա։

Տղեն էրթում է քաղաք ըստուր, ընտուր հարցնում է, սոնղ գրտնում է մի կնիկ ու ասում է.— Քեզի էսքան փող կուտամ արի էրթանք մեր տուն, ամեն օր մեր տանը կեցիր ու քուրոջս էլ լավ մուղաթ էղիր ինչուի իմ գալը։

Բերում է կնկան իր տուն։ Հ'էգսի օր բեռները բառնում հ'ընկնում է ճամբա։

Գնալու վախտ ղարաղուլ ղավազներին թամբիհ է անում, որ տանը լավ մուղաթ կենան, ղարիբ մարդու ներս չթողնին ու քուրոջը մնաս բարով է անում ու հայտե էրթում է դիպա Ստամբոլ։

Սիմոն կուպեցու տղեն որ հասնում է Ստամբոլ, հարցնում է Պետրոս աղի տուն, բազրկան դուզ իջնում է էնոր դուռը ու վեր է տալում բեռները։ Դուրս է գալում Պետրոս աղեն, աչում է, որ գեվեքը իր ախպեր Սիմոնին է ու հետի գալողը մի ջահել տղա է։ Ապրանքը տեղավորցուց, էկավ բարևեց ղարիբ տղի հետ, հարց ու փորձ արավ, իմացավ, որ իր աղբեր Սիմոնի տղեն է, ու Սիմոն էլ մեռել է։ Շատ լացավ, տղին մխիթարեց, տուն գնացին, հաց, կերակուր, պատիվ։ Կերան խմեցին տղի տեղ սարքեցին, որ բեզրած է հ'ելնի քնի։ Տղեն հ'ելավ քնավ։

Առավոտուն Պետրոս աղեն առավ Սիմոն կուպեցու տղին ու գնաց թագավորին տեսությանն։ Թագավորը վաղուց ծանոթ էր Սիմոն կուպեցու հետ, տղեն էլ ծանոթացավ, թագավորի ձեռը պագեց։ Թագավորի տղեն որ չը տեսա՞վ Սիմոն կուպեցու տղին, էլ չուզեց կողքեն հեռենալ։ Մեկեն սերը բռնում է էդ տղին, ծանոթանում է հետ, ամեն առավոտ գալում փաթթվում էր ջլնքով, տանում էր իրանց տուն պատվի ու օրերով էլ չէր թողնում գալու։

Կլոր մի ամիս անցավ, որ Սիմոն կուպեցու տղան Ստամբոլն է, ու ամեն օրն թագավորի տղի պատվին է։ Մեկ օր էլ Սիմոն կուպեցու տղեն կըսե Պետրոս աղին.— Հորեղբեր ամեն օր թագավորի տղեն ընձի պատիվ է անում, ինչ կոնե որ էսօր էլ ես էնոր բերեմ պատվի։

— Ի՞նչ կոնե,— շատ էլ լավ կ'ըլի։ պատրաստություն տեսնինք, ինչ որ կամքդ ուզում է կա, բերում ես բե՛ր։

Հ'էգսի օր, Պետրոս աղի տուն ամեն թարտիրը տեսան։ Սիմոն կուպեցու տղեն առավ թագավորի տղին տուն էկավ։

Պետրոս աղեն բերում թագավորի պալատից ինչուի իր դուռը խալի խալիչա է փռում, որ թագավորի տղեն գետնին չը քելե։

Սիմոն կուպեցու տղան էրթում, ներս է մտնում թագավորի տղի

մոտ, թագավորի տղեն տեղ է տալում նստելու։ Սիմոնի տղան չի նստում, ասում է։— Թագավորի տղա խնդրում եմ քեզնից մի բան, էս մի ամիս է որ ես էստեղ եմ ու ամեն օր էլ ձեր տուն եմ պատվի, էսօր էլ դու հախ նհախ մեր տուն պտի որ գաս պատվի։

Թագավորի տղան ասում է.— Ես, առանց իմ հոր իրավունքի չեմ գալում, թե որ հերս իրավունք տա գուքամ։

Թագավորի տղեն էրթում մորն է ասում, մերն էլ էրթում է թագավորի մոտ, ասում է.— Իրավունք տուր տղեդ էսօր էրթա իր ընկերի հետ քիչ ման գա, բացվի։

— Թող էրթա, ամա՛, ասա՛, որ գիշերը ուրիշ տեղ չմնա, տուն գա։

Թագավորի տղեն հ'ելնում է Սիմոն կուպեցու տղի հետ ղոլ բոյին է էղնում, էրկու ղավազ առաջն են ընկնում, էրկուսը հետև, Պետրոս աղի փռած խալու, խալիչաներու վրայից գալում գուզ էրթում են Պետրոս աղի տուն։ Պետրոս աղեն սեղան է պառաստում, թագավորի լայեղ կերակուրներ է բերում։ Թագավոր իր լալեն էլ է ճամբում։ Նստում ուտում խմում են, ինչունի հ'իրկուն քեֆ են անում։ Հ'իրիկուն թագավորի տղեն կըսե.— Վախտն է, ընձի իրավունք տվեք որ էրթամ, թագավոր ընձի չնեղնա։

Սիմոն կուպեցու տղան շատ յալվար արավ, որ էս մեկ գիշերն էլ իր ղոնախը մնա։ Թագավորի տղեն տեսավ, որ ճար չի ըլլի, մնաց։ Ինչունի քնելու վախտ յարանութեն արին։ Վախտ անցավ։ Տեղեր բերին քցեցին, թագավորի տղեն հ'ելավ պառկավ։ Սիմոն կուպեցու տղան ու լալեն էլ հ'ելան քնելու։ Սիմոն կուպեցու տղեն մոնց որ շորերը հանեց, բիրգան միտք հ'ընկավ իր քուրը, հանեց քուրոջ պատկերը, շամտնի լուսին լավըմ սեյր արավ, հավասն առավ։ Թագավորի տղեն զարթուն է էզնում, բիրգան տեսնում է աղջկա սիրուն պատկերը խելքը գլխից թռնում է։ Մտքի մեջ կըսե. «Աճապ էդ աղջկա պատկերը իմ աղբորս աչք քցածն է, բալլու է, չեն տված, ու իր սիրտ հովցնելու համար պատկերը ման է ածում իր հետ։ Թե որ էղենց մի բան է, իմ հոր սաղ թագավորութունը կըփչացնեմ գեմ ու էդ պատկերի տեր աղջիկը իմ ախպորը կը բերեմ գեմ»։

Դու մի ասեր, էդ պատկերը լալեն էլ է տեսնում, էնոր էլ խելքը թռնում է։ Էլ ձեն չեն հանում, ամա թագավորի տղի ու լալի քունը սաղ գիշեր էլ չի տանում։

Սարախտան տեղերուց հ'ելնում են իրանց շորերը հագնելու։ Էրկու ղավազ գալում են թագավորի տղի շորերը հագցնում են, ջուր են բերում, լվացվում։ Պետրոս աղեն էլ ամեն թաբտիրը տեսած էր՝

սամավար քցել բան, կերակուր ամեն բան հազիր։ Սիմոն կուպեցու տղան աշում է, որ թագավորի տղի նաշիաթը նաշիաթ չէ։

Կրսե թե.— Ախպեր, էս ի՞նչ բան է քեֆդ քեֆ չէ, զար իմ պատվին չը հավնար,— կրսե։

Թագավորի տղեն կոսե.— Ես իմանում էի թե դու ընձի սրտով ես սիրում, ուղիղ ախպեր ես։ Ես չէի հ'իմանում, թե քու գաղտնիքներ ընձեն պահում ես։

Սիմոն կուպեցու տղեն զարմանում է, երթում, էսգին, էնդին, թե.— Ես գաղտուկ բան չունիմ։

— Լավ,— կոսե թագավորի տղեն,— որ դու գաղտուկ բան չունիս, բա էն ի՞նչ աղշկա պատկեր էր, որ դու իրկուն պառկելու վախտ ծոցեդ հանիր, սեյր արիր ու նոր պառկար քնելու։ Էն պատկերը քու ի՞նչդ է, աչք քցա՞ծդ է, ի՞նչդ է, յաղո՞ւզ ես պահում, ասա՛, իմ հոր սաղ կարողությունը փչացնեմ, էդ աղշիկը քեզի բերեմ։ Ինչունի որ դյուզը չասես, ես քեզ հետ խոսողը չեմ։

Սիմոն կուպեցու տղեն տեսնում է, որ էլ պահելու ճար չկա, դյուզը ասում է.— Էն պատկերը իմ քուրոջ պատկերն է, ոչ թե աչք քցածիս, ես աչք քցած չունիմ։

Նոր, թագավորի տղի սիրտը կրակ ընկնում էրում գոլում է, խելքը կորցնում ու բաշլայում է մտածել։ Քիչըմ հաց որ ուտում են, չայ խմում, թագավորի տղան հ'ուզում է էրթալ։

Դու ինչ կոսես, որ լալեն էլ է'ն կողմեն է էրում պատկերի համար։

Սիմոն կուպեցու տղան հ'ելնում թագավորի տղին ու լալին տանում ճամբու է գնում, դառնում գալում է։

Թագավորի տղեն տուն հասնում է թե չէ ծանր հիվանդանում է։ Մերը տեսնում է, որ տղի հալը հալ չէ, թագավորին իմաց է տալում թե՝ տղան հիվանդ է։

Թագավորը, իրա վազիր նազիրը շտապոք հ'ելնում գալում են, թոփ են էղնում տղի բոլորը։ Սաղ քաղաքը տխրավ, թե թագավորի մեկուճար տղեն հիվանդ է։ Որր կոսե «գեղ են տվել», որը կոսե «մրսել է», որն էլ մի բախշա բան է ասում։ Հեքիմներ թոփ են էղնում, գալում են, տղի ցավից բան չեն հասկնում։ Թոմար հ'ելնում դուրս են էրթում։ Թագավորն էլ է դուրս էրթում։ Տեսնում են, որ տղան իսկի չի խոսում։ Թագավորը թամբիհ է անում իր սուլթանին թե.— Դու մնացի տղիս մոտ, հարցու թե ինչի է էտենց էղե, կարելի է քեզի կոսե։

Թոմար էրթում են, մնում է մերը, հարց ու փորձ է անում տղին,

թե. Հ՚երեկ սաղ գնաց, էսօր ի՞նչ ձեռ տվեց, որ էգենց ծանր հիվընգացավ։

Տղեն մորը կոսե.— Ընձի Սիմոն կուպեցու աղջիկը հ՚ուզում եք, հ՚ուզեք, թե չէ ես մեռնում եմ։

Մերը յալվար կոնե թե.— Որդի, դու մեկ թագավորի տղա, էն մեկ վաճառականի աղջիկ, ամոթ չէ՞, որ դու էգենց բան ես մտածում, հերդ որ իմանա ի՞նչ կոսե։ Չրկա՞ աշխարք ուրիշ թագավորի աղջիկ, որ դու առնիս, որ էդ կուպեցու աղջիկն առնիս։

— Չէ,— ասում է տղան,— իմս որ կա էն է, հ՚ուզում եք հ՚ուզեք, չեք հ՚ուզում ես մեռնում եմ։

Մերը հ՚ելնում էրթում է թագավորի մոտ, ասում է.—Տղեղ սիրտ է քցեր Սիմոն կուպեցու աղջկան, ասում է. «Հ՚ուզեք, չեք հ՚ուզում՝ ես որ մեռնում եմ»։

— Այ կնիկ, ես մի թագավոր, ես մո՞նց էրթամ մեկ կուպեցու աղջիկ հ՚ուզեմ, լսողը ի՞նչ կըսե։ Չկա՞ թագավորի աղջիկ, որ հ՚ուզեմ։

Թագավորի կնիկը կոսե.— Ես էդ թոմար ասել եմ, իլլաճ չկա, չի համոզվում, ընձի լսո՞ւմ ես, թե որ հ՚ուզում ես տղեղ ապրի, իրա ասածը կոնես։

Թագավորը մարդ է ուղարկում Պետրոս աղի ու Սիմոն կուպեցու տղի հետևեն։ Ղավազները էրթում ասում են թե. «Ձեզի թագավորը կանչում է»։

Հ՚ելնում, էրկուսն էլ թաբտիրով դյուզ քշում էրթում են թագավորի քոշք ու սարեն։ Ներս են մտնում տեսնում են, որ թագավոր իր բոլոր վազիր նազիրներով նստած է։ Բարև են տալում։ Թագավոր տեղ է նշանց տալում որ նստին։

Թագավոր ասում է.— Գիտե՞ք ձեզի յաղուզ եմ կանչե՞ր։ Ես հ՚ուզում եմ, որ դուք Սիմոն կուպեցու աղջիկը իմ տղիս տաք։

Պետրոս աղեն ու կուպեցու տղեն զարմանում են։ Գիտեն, թե թագավոր իրանց վրա է խնդում։ Գլխներ կախում, մտածում են։

— Ինչի եք մտածում, ես իմ սրտովս եմ ասում, դուք բալլու որ չավտցաք իմ խոսքին։

Սիմոն կուպեցու տղան հ՚ելնում թագավորի ձեռքը պագում է ու ասում։— Թագավոր ապրած կենա, դու որ հ՚ուղում ես իմ քուրը քու տղին, ես էլ ուրախությամբ տվեցի։ Մեկ աղջիկ է, թագավորին փեշքեշ։

Խաբարը գնաց թագավորի տղին, թե Սիմոն կուպեցու աղջիկ ճերդ հ՚ուզեց քեզի։ Տղեն սաղցավ։

Թագավորը հրամայում է, որ գեղացիք թե քաղքցիք ուտեն խմեն, քեֆ անեն թագավորի շոթքից։ Սաղ քաղաքը ուրախնում է, թե թագավորը իր տղեն կարգել է։

Լալեն հ'իմանում է, որ թագավոր Սիմոն կուպեցու աղշիկը հ'ուղել է։ Նոր որ կրակ հ'ընկնում է լալի սիրտը, գոլում է։

Մտածում է՝ աճապ ես ինչրխ ընեմ, որ էգ կուպեցու տղի գլուխ մեկ դաղ խաղամ ու քուրոշն էլ ես առնիմ։

Հ'ելնում էրթում է թագավորի մոտ. ասում է.— Ամոթ չէ՞, որ դու մեկ էրկրի թագավոր էրթում մեկ անզգամ բոշիմ ես հ'ուզում, որ օրական քսան մարդ է տանում-բերում։

Թագավոր զարմանում մնում է, ձեռաց հրամայում է, որ էրկուղավազ էրթան Պետրոս աղին ու Սիմոն կուպեցու տղին կանչեն։ էրթում կանչում են։ Ներս են մտնում աշում են, որ թագավոր էնենց է հերսոտե, որ աստուծ շանչ չտա։

Թագավոր վերցնում ասում է.— Ես ձեր գլխներ պիտի զարնեմ, դուք որ գիտեիք ձեր աղշկա դայղրն, յաղո՞ւզ տվիք իմ տղին։

Զարմանում մնում են տեղերը, թե էս ի՞նչ փորձանքի դուշ էղանք։ Սիմոն կուպեցի տղեն վերցնում ասում է.— Թե որ իմ քուրը էդ բնությյան տերը էղավ, ես էլ ու իմ հորողբերս էլ տարաղաճ, թե որ սուտ էղավ, էդ մատնությյուն անողը տարաղաճ հ'ելնի։

Լալեն հ'ելնում թագավորին ասում է.— Թագավոր ապրած կեանա ընձի երսուն օր վատա տուր, թե որ էն աղշկա նշանը բերի, զաթի իմ խոսքն է, թե որ չբերի, ես տարաղաճ կախվիմ։

Բերում թագավորի մոտ ստորագրություն են տալում Սիմոն կուպեցու տղի հետ, թե սուչն ում վրա որ մնա տարաղաճ կախվի։

Լալեն հ'ելնում էրթում է քաղքի մեջ, Սիմոն կուպեցու տղի բերնից մեկ նամակ է գրել տալում քուրոշը թե՝ էս մարդ մեր տուն է գալում, լավ պատիվ կոնես, հետո ճամբու կը դնես գես։ Էսպես գրել է տալում ու նստում է ձի, հայտե Սիմոն կուպեցու տուն հ'ուրտի ես էկա դիպա քեզի։

Լալեն էրթում հասնում է քաղաքը, հարց ու փորձ անում, թե. «Սիմոն կուպեցու տուն հ'ուրտի է՞»։ Ցուց են տալում, քշում ձին, գալում դուռը կենում է։ Ղավազներ գալում հ'առաջ հարցնում են թե.— Դու ի՞նչ մարդ ես։

Լալեն կոսե.— Ձեր աղի մոտեն նամակ եմ բերել իր քուրոշը։ Ասեք իրան, ներս դամ, տամ։

Ղավազներ էրթում ասում են աղշկան թե.— Մեկ ղարիբ ձիա-

վոր է մեր դռան կեցե, ասում է. «Աղից նամակ ունիմ իրա քուրոջը տալու»։ Իրավո՞ւնք է ներս գա թե չէ։

— Գացեք ասեք, թող նամակը տա տեսնիմ։

Ղավազները էրթում ասում են.— Նամակը տուր, մեր աղի քուրը հ'ուզում է։

Նամակը առնում, բերում տալում են աղջկան։ Բանում կարդում է, որ էս նամակը իր աղբոր դրածը չէ, հետ է տալում, ասում է.— Տարեք էդ մարդուն տվեք ու ասեք, որ թողնի հեռենա, թե չէ որ ներս էկավ, իրան կտոր-կտոր կոնեմ։ Էս նամակը իմ աղբոր դրածը չէ։

Տանում նամակը հետ են տալում լալին։ Լալեն փոռ փոշման գառնում է քաղքի մեջ։ Էրթում մի տեղ իջնում է, հարց ու փորձ է անում, թե էս քաղքի մեջ մի էնպես պառավ կնիկ չկա, մի աստուծավախ կնիկ։ Ասում են, էղենց մի կնիկ կա, որ Սիմոն կուպեցու տուն է էրթում, աղջկա դլուխը լվանալու։

Լալեն էրթում պառավին գտնում է։ Շատ է համոզում, տեսնում է, որ ճար չի լինում, հանում մի բուռ օսկի է տալում, ասում է.— Սիմոն կուպեցու աղջկա մոտից ընձի մեկ նշան կը բերես։

Պառավ օսկին որ տեսնում է հոդին ու աստվածը ուրանում է, հ'ելնում էրթում է աղջկա մոտ։ Էդ օրն էլ աղջկա գլխի լվանալու օրն էր։ Պառավ տանում է աղջկա գլուխը լվանալու. միամիտ, շորերը հանում է դնում է մեկ կողմ, իր մատից թանգ անգին մատնին էլ դնում է շորերու վրեն, ինչրխ ամեն անգամ դնում էր։

Աղջիկը լողացավ պրծավ, հ'ելավ որ շորերը հագնի։ Պառավ գնաց շորեր բերելու, մատնին վերցուց դրեց ջեբը։ Աղջիկ միամիտ, շորերը հագավ, մատնին մոռցավ։ Պառավը շտապոք մատնին տարավ տվեց լալին։ Լալեն մեկ բուռ էլի օսկի տվեց պառվին, հեծավ ձին ու հայտե դիպա Ստամբոլ։

Էդ օրը անցնում է, հ'եգսի օրը նոր աղջիկ վրա վարմիշ է էղնում, որ մատնին չկա։ Ղրկում պառավին բերում հարցնում է, պառավ էրթում է ուտում թե՝ ես խաբար չեմ։ Աղջիկը չի հավատում, հասկնում է, որ էն մարդը աղբոր մոտեն խարդախ նամակ էր բերել, պառավը մատնին էն մարդուն տարավ տվեց։

Շատ է զոռում պառվին,— պառավ մուխուր չի գալում։ Աղջիկն ասում է.— Ա՜յ պառավ, մեղք ես, իմ հացը շատ ես կերել, մատնուս տեղ ասա, թե չէ, քեզի պատին փարշին կոնեմ։

Պառավ էլի էրթում է ուտում։ Աղջիկ ղավազներին ասում է, ղավազներ բռնում պառվին, պատից փարշին են ուռնում։

Մենք խաբարը լալից տանք։ Լալեն մատնիք դյուզ տանում տա-

լում է թագավորին.— Իշթը քու հ'ուզած հարսի մատնին,— ասում է,— դու ընձի չէիր հավատում։

Թագավորը կանչում է Պետրոս աղին ու Սիմոն կուպեցու տղին։ Գալում են Սիմոնի տղեն ու Պետրոս աղեն թագավորի դիվանը։ Թագավոր վերցնում մատնին տալում է Սիմոն կուպեցու տղին թե.—Էսի քու քուրոջ մատնի՞ն է։

— Այո՛, թագավոր ապրած կենա, իմ քուրոջ մատնիքն է։

— Թե որ էգենց է, գու ու քու հորողբերդ ստորագրութուն եք տված, որ տարաղաճ պետք է հ'ելնիք։

— Թագավոր ապրած կենա,— կոսե կուպեցու տղեն,— խընդրում եմ հինգ օր մեղի վատա տաս։ Հինգ օր որ թմմավ մենք տարաճաղ պետք է հ'ելնինք։

Թագավոր կոսե.— Հինգ օր ձեզի վատա, հինգ օր որ թմմավ էլ խոսք չկա։

Սիմոն կուպեցու տղեն ու Պետրոս աղեն հ'ելնում սև կառեթը պառաստում են, սև շորեր հագնում են, նստում են ու հայտե քշում են դիպա իր տունը։ Խարարը գալում հասնում է քուրոջը թե.— Վալլա չես ասում, ախպերդ էկավ սև շորեր հագած, սև կառեթի մեջ նստած։

Քուրն ասում է.— Վալլա՛ իմ աղբոր մի դաղիա ձեռ տվել է, աստուծ խերն անե։

Գալում կառեթը դուռ կայնում է, դավազներ ուրախնալով էթում են կառեթի հ'առաջ։ Տղեն առանց կառեթից իջնելու ասում է.—Գնացեք քուրոջս ասեք, դուրս գա, բան ունիմ ասելու։

Քուրը գալում քիչ որ մոտենում է՝ ախպեր գունդ թքում է երեսն ու կառեթի գլուխ դարձնում է ու հայդե քշում դիպա Ստամբոլ։

Քուրը տեսնում է, որ էլ ճար չկա, աղբորը պտի խեղդեն, հ'ելնում էրթում է բազարից էնենց մի մատնի է գնում, որ իր հ'առջի մատնուց էլ լավ, մեկ էլ՝ որ էն թագավորի հողի մեջ էնենց մի մատնի չի ճարվում։ Թոփ է անում իրանց քաղաքի մեծամեծ մարդիկ, դիր է առնում, որ՝ էս աղջկանից մաքուր չի կարա էղնի աշխարքի մեջ, ինչ որ ասել են սուտ են ասել։ Էս թուղթը պառաստում է, էրթում է մեկ ֆայթոն է բռնում, ասում է.— Ընձի կարա՞ս վախթ վախթ Ստամբոլ հասցնե, ինչքան որ փող ուզես կուտամ։

Սիմոն կուպեցու աղջիկ հ'եգսի օր նստում է ֆայթոն ու քշում է դիպա Ստամբոլ։ Հասնում է քաղքի քանարը, ֆայթոնճուն հետ է դառցնում, չարսավը քաշում է գլխին ու էրթում է քաղքի մեջ։ Հիրիկվա ժամի վախտն է էղնում։ Դյուզ էրթում է ժամ։ էրթում մի

կնկա մոտ կայնում է, աշում է, որ էդ կնիկը լալում ու աղոթում է։ Մնում է ինչունի ժամից դուրս են գալում։ Ինքն էլ էն կնկա հետ դուրս է գալում, դռան հարցնում է.— Քալե՛, դու ընչի ես էգենց լալում։

Պետրոս աղի կնիկը ասում է.— Ի՞նչ անեմ, որ չը լամ, հ՚եգուց առավոտ իմ մարդուս ու Սիմոն կուպեցու տղին թագավոր տարաղաճ է հանում մեկ ղանջղ աղջկա ճոթեն։

— Քալե՛, էս քաղքի մեջ ծանոթ չունիմ. ի՞նչ կոնե ընձի էլ քու հետ տանիս ձեր տուն էսօր մնամ, էգուց էրթում եմ։

— Ի՞նչ կոնե, ոչինչ էլ չի էղնում, արի՛ էրթանք, միսաֆիր ասսու միսաֆիրն է։

Պետրոս աղի կնիկը առնում տանում է իր տուն, ինչունի լուս լալում է։

Շաֆաղին բոռեքը չալեցին, տարաղաճը հազիր արած էր. Քաղքի մեջ մարդ չմնաց թոփ էղավ, էկավ սեյր էնելու։ Զարսուի միջով Պետրոս աղին ու Սիմոն կուպեցու տղին տարաղաճի շորեր հագուցած տանում էին։

Թագավորի ֆարմանն էլ շլնքներուց կախած։ Մեկ լաց ու կոծ էր ընկած Պետրոս աղի տան մեջ, որ աստուծ շանց չտա։ Սիմոն կուպեցու աղջիկ սիրտ է տալում Պետրոս աղի կնկան թե՝ մի լար աստված ողորմած է։ Գիշեր Պետրոս աղի կնիկ թոմար էղելութունը թարիվ էր արեր աղջկան։

Սիմոն կուպեցու աղջիկ էդ վախտ հ՚ելնում, չարսավը առնում է գլխին ու էրթում է դպա թագավոր։ Աչում է, որ թագավորը նստած է իր թախտի վրա, տեսնի, թե ինչրխ էն անում կախվողներ։ Մեկ էլ տեսնում է, որ մի չարսավով կնիկ էկավ, դյուղ թագավորի դեմ կեցավ։

Թագավոր հարցնում է թե.— Ի՞նչ կոսես։

Կնիկն ասում է.— Խնդրում եմ թագավորից, որ իրավունք տա էդ մարդիկը չը կախվին, ինչունի որ էրկու խոսք ունիմ ասելու, ասեմ հետո թագավոր գիտե, ինչ կոնե թող անե։

Թագավոր ամր է անում.— Մարդիկ չկախեն, ինչունի էս կնիկարմատը իր խոսքը պրծնի։

Թոմար չալդիների ձենը կռում է, խալխը, որ թոփ էին էղած, ձենները կռում են, տեսնին, թե ի՞նչ կոսե էդ ղարիբ կնիկը։

— Դե՞հ, խոսիր աշեմ, ի՞նչ ես ասում,— կրսե թագավորը։

Աղջիկը ջեբից հանեց մի մատնիք ու գրեց թագավորի առջև։ Էնպես մի թանգ մատնիք, որ թագավորի սաղ խազնեն ածենար ու

ասում է.— Թագավոր ապրած կենա, քու լալեն իմ ես մատնիքի թա-
յը գողցել է, ես քեզեն կուզեմ։

Լալի աչքը որ չդիպավ մատնուն, ծնկները դողաց։ Թագավորին
էլ խելքը գլխից թռավ, որ իր սաղ խազնեն էլ ու քաղաքի ռիթուն
հարստութունն էլ ածենար։

Թագավորը հարցնում է լալին թե.— Դու էս կնիկ արմատի
մատնին գողցե՞լ ես։

Լալեն թագավորի ու սաղ իշխանների առջև երգվում ասում է.—
Թագավոր ապրած կենա, սուտ է ասում, ես ըստոր հ՚երեսը չեմ տե-
սեր, ըստոր չեմ էլ ճանչնում, ես ըստոր մատնին հ՚ո՞ւրտից գողցա։

Աղջիկը թագավորի մոտ իրեք անգամ հարցնում է, լալեն էլ
իրեք անգամ երդումով թաքրրրում է թե. «Ես էս կնիկ մարդու երես
բիլա չեմ տեսած»։

— Թագավոր, ժողովուրդ, դուք վկա եք, որ էս մարդն ասում
է թե. «Ես էս աղջկա հ՚երես չեմ տեսեր», ապա որ դու իմ երեսը չես
տեսած, ընձի չես ճանչնում, ապա մո՞նց ես իմ ախպորն ու հորող-
բորը տարաղաճ հանում։

Թագավոր, իշխաններ, թոմար էս խոսքեր որ լսում են՝ տեղն
ու տեղ սառում են։

Աղջիկը ըստի մեկ, մեկ թագավորին պատմում է, թե մոնց էր
էդ մարդը ախպոր մոտեն կեղծ նամակ բերել. «Ես չընդունեցի, հետև
էս մարդը էրթում իմ գլուխ լվանող պառվին է գտնում, օսկի է տա-
լում, պառավն էլ իմ մատնիս գողնում, տալում է ըստոր։ Պառավին
էլ բռնել փարչինել եմ մեր պատին, չեք էլ հավատում մարդ ղրկեք
թող տեսնի»։ Հ՚ետև ծոցից հանում է իր քաղքի իշխաններից բերած
ստորագրութունները, որ գրած են թե. «Մենք էս աղջկա պակասու-
թուն տեսած չենք»։

Թագավոր հրաման է տալում թե.— Էդ էրկու մարդուն ետ դար-
ձուցեք, էդոնց տեղ էս լալին տարաղաճ հանեք։

Լալին տանում հանում են տարաղաճ, ամեն մարդ էլ ուրախ-
նում է, որ կեղծավոր լալին տարաղաճ են հանում։

Թագավոր բերում Պետրոս աղին ու Սիմոն կուպեցու տղին ղրր-
կում է համամ։ Աղջկան էլ բաղչա է ղրկում, թամուզ շորերը փո-
խում են, պսակի մի լավ ղաթ հալավ են կարում աղջկան։

Թագավոր հրաման է հանում, որ իր մեկուճար տղի հարսնիքն
է, ամեն մարդ գա քեֆ անե։ Հ՚ուրդի մի աղքատ մարդ կար վա-
զում էր քաղաք քեֆ անելու։ Բերնե-բերան խոսում էին թե. «Մեր
թագավորը իր տղին մեկ խելացի ու սիրուն աղջիկ է հ՚ուզել»։

Թագավորի տղին պսակեցին։ Քառսուն օր, քառսուն գիշեր կե-
բան խմին։ Էնոնք հասան իրենց մուրազին, դուք էլ՝ ձեր մուրազին։